Անվտանգության ցանց բիզնեսի սեփականատերերի
կամ ինքնազբաղված և անկախ կապալառուների համար:

Հաշմանդամության ապահովագրության ընտրովի ապահովագրում

EDD

Ֆինանսական անվտանգության ցանց

Մենք առաջարկում ենք Disability Insurance Elective Coverage (DIEC), որը ծրագիր է այն մարդկանց համար, ովքեր.

- Չեն վճարում նահանգային հաշմանդամության ապահովագրության (SDI) վճարները, բայց ցանկանում են օգտվել հաշմանդամության ապահովագրությունից և ընտանեկան վճարովի արձակուրդից (PFL):
- Յուրաքանչյուր անձ, ով ստանում է իր եկամտի մեծ մասը ինքնազբաղվածությունից կամ բիզնեսից, կարող է ընտրել DIEC ապահովագրությունը:

DIEC-ը պաշտպանում է Կալիֆոռնիայում բիզնես վարող ընկերությունների մեծ մասը կազմող փոքր բիզնեսների սեփականատերերին, ձեռնարկատերերին, անկախ կապալառուներին կամ ինքնազբաղված մարդկանց:

Ի՞նչ առավելություններ է տալիս DIEC-ը

- Պաշտպանություն եկամտի կորստից՝ վնասվածքի, հղիության կամ հիվանդության պատճառով, անկախ նրանից՝ դա կապված է աշխատանքի հետ, թե ոչ:
- Մինչև 39 շաբաթ տևողությամբ նպաստներ ձեր հաշմանդամության համար:
- PFL-ի ավտոմատ ապահովագրություն, որը տրամադրում է մինչև ութ շաբաթ տևողությամբ նպաստներ հետևյալ դեպքերում.
  - Ընտանիքի ծանր հիվանդ անդամին խնամելու համար:
  - Ընտանիքում նոր երեխայի հետ մտերմանալու համար:
  - Ռազմական որակավորման միջոցառմանը մասնակցելու համար:

Վճարվելիք գումարի չափը որոշվում է Ներքին եկամուտների ծառայության (IRS) ձևաթուղթ 1040-ում ներկայացված ձեր պատասխանների հիման վրա (Հավելված SE կամ Հավելված C):

Ավելին իմանալու համար այցելեք Benefits and Premium Amounts:

Ավելին իմանալու համար զանգահարեք.

- **Հաշմանդամություն՝** 1-800-480-3287
- **PFL՝** 1-877-238-4373

Օգնում ենք ձեռնարկատերերին և ինքնազբաղված մարդկանց ներկա լինել կարևոր պահերին:

Ես իրավասո՞ւ եմ DIEC-ի համար

Իրավասու լինելու համար դուք պետք է.

- Ունենաք ձեր սեփական բիզնեսը, լինեք ինքնազբաղված, կամ աշխատեք որպես անկախ կապալառու:
- Ունենաք տարեկան նվազագույնը $4,600 զուտ եկամուտ:
- Ունենաք վավեր լիցենզիա, եթե դա պահանջվում է ձեր աշխատանքի համար:
- Դիմումը ներկայացնելու պահին աշխատեք լրիվ դրույքով և կատարեք ձեր բոլոր պարտականությունները:
- Ստանաք ձեր եկամտի հիմնական մասը առևտրից, բիզնեսից կամ անկախ կապալառուի աշխատանքից:
- Ձեր բիզնեսը չի կարող սեզոնային բնույթ կրել:
- Եթե չդադարեցնեք ձեր բիզնեսը կամ չտեղափոխվեք Կալիֆորնիայից, ապա պետք է մնաք ծրագրում երկու ամբողջական օրացուցային տարի:

Այցելեք Eligibility Requirements for Disability Insurance Elective Coverage ավելին իմանալու համար:

Եթե ունեք հարցեր,

- **զանգահարեք.** 1-916-654-6288.

Եթե ցանկանում եք որևէ հայցադիմում, ներբեռնեք կամ պատվիրեք Forms and Publications բաժնում (edd.ca.gov/forms) կամ զանգահարեք 1-916-554-7104:

Ընտանեկան վճարովի արձակուրդ

Ներկա գտնվեք այն պահերին, որոնք կարևոր են:

SDI ծրագրերի և SDI-ի հետ կապվելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ Contact State Disability Insurance:

EDD-ն հավասար հնարավորությունների գործատու/ծրագիր է: Հաշմանդամություն ունեցող անձանց խնդրանքով տրամադրվում են օժանդակ օգնություն և ծառայություններ: Ծառայությունների, օժանդակ միջոցների և/կամ այլընտրանքային ձևաչափերի հարցումներն իրականացվում են զանգահարելով 1-866-490-8879: TTY օգտատերեր, խնդրում ենք զանգահարել Կալիֆոռնիայի Փոխանցման ծառայություն 711 հեռախոսահամարով:

Այս բրոշյուրը միայն ընդհանուր տեղեկատվության համար է և չունի օրենքի, կանոնների և կանոնակարգերի ուժ և ազդեցություն: